

ՁՕԼ

Եղեգնեայ գըրչով երգեցի փառքեր.

- Քեզի ընծա՛յ, իմ հայրենիք -

Սօսեաց անտառէն էի զայն կըտորեր...

- Քեզի ընծա՛յ, հին հայրենիք -

Եղեգնեայ գըրչով երգեցի քուրմեր.

Ընդ եղեգան փող լո՛յս ելաներ:

Եղեգնեայ գըրչով երգեցի կարօս.

- Ձեզի ընծա՛յ, հայ պանդուխտներ -

Ան տարաշխարհիկ բոյսի մ'եր ծըղօս...

- Ձեզի ընծա՛յ, հեզ պանդուխտներ -

Եղեգնեայ գըրչով երգեցի հարսեր.

Ընդ եղեգան փող ո՛ղբ ելաներ:

Եղեգնեայ գըրչով երգեցի արիւն.

- Ձեզի ընծա՛յ, սուրի զոհեր -

Ան ծլած էր մոխրի մէջ իբրեւ կընիւն...

- Ձեզի ընծա՛յ, կրակի զոհեր -

Եղեգնեայ գըրչով երգեցի վերքեր.

Ընդ եղեգան փող սի՛րտս ելաներ:

Եղեգնեայ գըրչով որբ տունս երգեցի.

- Քեզի ընծա՛յ, հայր ալեհեր -

Յամբած աղբիւրէն մեր զայն յօսեցի...

- Քեզի ընծա՛յ, մայր կարեվեր -

Եղեգնեայ գըրչով օճախս երգեցի.

Ընդ եղեգան փող ծո՛ւխ ելաներ: